

ՔԻՒՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

(Ազգակցութիւնը իբր հիմք բնկերական կազմաւորութեան . մի եւ նոյն հողի վրայ բնակակցութիւնը իբր հիմք քաղաքական հասարակութեան . Քիւրդերու կազմը ու անոնց պատմական քաղաքակրթութեան ասիւնանական զարգացման չափը .)

Գրելի Քիւրդերու պատմութիւնը կը նշանակէ բնորոշել ցեղ մը , անոր հասարակական կազմը հողի մը վրայ , աստիճանական զարգացումը ու պատմական կեանքը ընդհանրապէս իր ամբողջ խառն ու բարդ երևոյթներով :

Նորագոյն հետազոտիչները որոնք ուսումնասիրած են ու դեռ կ'ուսումնասիրեն ընտանիքը , հասարակական ընկերակցութիւնը ու պետութիւնը , կը ճգնին անցնիլ մինչև ծագումի օրերը՝ զանելու համար ընթացքը ցեղերու կազմութեան , անոնց աճեցական կեանքին , զարգացման տարրերուն , ու պետութիւն կազմելու դրութեան :

Կ'ընդունին որ նախապէս ազգակցութիւնն է որ կ'երեւի իբր կապ՝ հասարակութիւն մը կազմելու , համահայրութիւնը , որմէ սերած լինի ցեղ մը ու ժողովուրդ մը . բայց երբ հասարակութիւն մը իր պարզ ընտանեկան ձևէն դուրս կու գայ ու աճման և կեանքի զանազան պէտքերուն համաձայն կ'առնէ ընկերական ձև , ու միասին ապրելու ստիպողականութենէն կ'անցնի իրար միացնող սկզբնական պետական ձևին՝ ցեղը կը կազմուի :

Ըստ Մէնի , մարդկային ընկերութեանց նախնական պատմութեան վրայ եղած վերջին հետազոտութիւնները կը թողարեն